ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-3.2.5

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ ,Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրիե համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Ծրագրի նպատակն է ուժեղացնել կառավարության կարողությունները՝ ընկերություններին արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և որակի կառավարման ծառայությունների մատուցման ոլորտում:

Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել Հավատարմագրման Ազգային Մարմնի (ՀԱՄ) աշխատանքային տարածքի հիմնանորոգում, ներառյալ՝ աշխատանքային տարածքները, հանդիպումների սրահները, արխիվների պահպանման պահեստները (ընդհանուր՝ 585,5 մ^2):

Սույն հանձնարարականի գլխավոր նպատակն է ՀԱՄ-ի գրասենյակների ինժեներական նախագծերի և վերլուծությունների արդյունավետ իրականացում և կառուցվածքների ապահովում, ներառյալ նախագծերի, ֆունկցիոնալության և հեռախոսային կարգավորումների (ներքին և արտաքին հեռախոսակապի), ինտերնետ անվտանգության, հակահրդեհային համակարգի, շենքի տվյալների բազայի, ցանցի և սարքավորումների միացման համար անհրաժեշտ հարմարությունների և բյուջեի մանրամասն նկարագրությունը, ցանցի և սարքավորումների տեղադրման աշխատանքների, ինչպես նաև հիմնանորոգման փուլում հեղինակային հսկողության ապահովումը:

Ուստի ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը եւ ՀՀ ֆինանսների նախարարության “Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կհաստատեն,

որ նրանք ունեն ծառայություններն իրականացնելու համար պահանջվող որակավորումը և համապատասխան փորձառությունը:

Վերոհիշյալ նպատակների իրականացման համար, Խորհրդատուն պետք է իրականացնի հետևյալ հիմնական առաջադրանքները.

1) <u>Նախագծման իրականացում</u>

ա) Տեղանքի ինժեներական նախագծում և վերլուծություն

1. Իրականացնել ինժեներական վերլուծություն և ընտրված տեղամասերի զննում Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող՝ 3-րդ հարկում տեղակայված 585,5 մ^2 տարածքում:
2. Մշակել տեխնիկական նախագծման պլան և կազմել մանրամասն նախահաշիվ՝ տարածքի վերանորոգման և շինարարության համար

բ) Նախագծել հեռախոսային, ինտերնետային, ջեռուցման և օդափոխման համակարգերը, էլեկտրականության, հակահրդեհային անվտանգության համակարգերը, ինչպես նաև տվյալների ցանցը

<u>2)Հեղինակային հսկողության իրականացում:</u>

Հանձնարարականի առաջին փուլի՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, տևողությունը 3 ամիս է:

Հեղինակային հսկողության գործողությունները պետք է սկսվեն ծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի օրը և ավարտվեն ծրագրի ավարտման ակտի ստորագրությամբ՝ ինչպես նշված կլինի հիմնանորգման աշխատանքների պայմանագրում:

Խորհրդատվական ընկերությունը պետք է համապատասխանի հետևյալ որակավորման պահանջներին և ունենա՝

- Պետական կառույցների նախագծման և շինարարության հսկողության ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- Ունենա անհրաժեշտ բոլոր հավաստագրերն ու լիցենզիաները և գործի համաձայն ՀՀ օրենսդրության:
- Ունենա առնվազն երեք նմանօրինակ աշխատանքների իրականացումը հավաստող պորտֆեյլ,
- Ընկերության աշխատակազմը պետք է բաղկացած լինի առնվազն մեկ մասնագետից՝ նշված յուրաքանչյուր առաջադրանքի իրականացման համար պահանջվող հիմնական մասնագիտական ոլորտում (ինժեներ, ջեռուցման և օդափոխման համակարգի մասնագետ, էլեկտրիկ, հեռահաղորդակցման (հեռախոս, համացանց և այլն) և անվտանգության ցանցերի մասնագետներ):

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել 2011թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի ,ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունումե Ուղեցույցների (Խորհրդատուների ուղեցույց) 1.9. պարբերությանը, որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների շրջանակներում սահմանված Բաժին II-ում ներկայացված «Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են ներկայացնել հետաքրքրվածության հայտեր՝ անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի) ստորեւ նշված հասցեով (անձամբ կամ փոստով կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. մայիսի 11-ը, ժամը 18:00** :

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
Պրն Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am